ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 15.07.2024թ. հ. 193-2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Աջափնյակ վարչական շրջանում գտնվող Հովհաննես Թումանյանի անվան այգին (Թումո) տրված է վարձակալության: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի խնամքի տակ այգու հատված առկա չէ: Այգու խնամքի աշխատանքներն իրականացվում են վարձակալի կողմից, բացառությամբ ծառահատումների և ծառերի էտի, որոնք անհրաժեշտ է իրականացվեն «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի մասնագետի ներկայությամբ և ցուցումներով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ համաձայն Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի կողմից միջնորդագիր է ուղարկվել այգու վարձակալին՝ բարձրացված խնդիրներն ուսումնասիրելու և հնարավորինս դրանք կարգավորելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ